Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀՍԿԱՆԵՐԻ ԹՌԻՉՔԸ

Դաշտերի կանաչ հստակություն և խաղաղություն: Առաջ ենք գնում: Մեզ ճամփա են տալիս խաղողի գանգրավոր այգիները, բամբակի դեռևս լերկ արտերն ու մեջեմեջ ցորենի, գարու ցանքսերը: Ամեն տեղ կանաչ, կանաչ, կանաչ: Բերքը գալիս է լիառատ, հեղեղի պես, տիրական թափով:

Գնում ենք երեսներս դեպի Մասիսները, որ կապույտ աշխարհների պես այստեղից խորն են երևում, հսկա տարածված:

Արևն այրում է, խաղողի տերևների մի երեսին անդրադառնում է երկնակապույտը, և խաղողի վազը ժպտում է հարբած իր բերելիք գինով:

Արտաշատի կոլեկտիվի դաշտերն են սրանք: Այգիներ, բամբակի դաշտեր, որ անցանկապատ, համատարած, ինչպես կոլեկտիվ տնտեսությունը՝ գնում են կորչում հեռվում:

Պատեր տեղ-տեղ են երևում միայն: Դա մենատնտեսներինն է մեծ մասամբ:

Գնում ենք դեպի բրիգադները: Տղամարդիկ երեկ տղամարդավարի վերջացրին այգեփորը և այսօր գնացել են քաղհանի, կանանց բուքսիրի: Հիշելով երեկվա այգեփորի տաժանելի գործը նոր ես հասկանում, որ նրա համեմատ բամբակի քաղհանը «կանանց» գործ է:

Փշատենիները լցրել են օդն իրենց գաղջ ու մեղկ բուրմունքով: Այգիների ու արտերի եզրերին բարդիներ ու ընկուզենիներ են բարձրանում: Ահա մի շենք է դուրս պրծնում այգիներիկանաչից: Այնտեղից երեխաների ղժվժոց է գալիս: Կարծես գառների մայոց լինի:

Մանկամսուրն է: Մոտենում ենք: Սենյակը, բակը, ծառերի տակին լցված են ծծկեր ու քիչ մեծ երեխաներով: Նրանք պառկած են մահճակալների, կապերտների ու խոտի վրա: Ոմանք մաքուր օդից հարբել, քնել են, ոմանք էլ այնպես են եռանդով լաց լինում, կարծես դրա համար աշխօր պիտի ստանան: Երիտասարդ կին՝ Արմենուհի Մաղաքելյանը գլուխը չի կորցրել ըստ երևույթին: Նա գրկին երեք երեխա, ոտով էլ օրորում է մի մահճակալ, ինքն էլ ռիթմիկ պար է գալիս: Մեզ տեսնելով ծիծաղում է: Երեխաները ծծկեր են, լաց են լինում անշուշտ կաթի համար:

Եվ ահա տասնյակ երեխա իրենց լացով զարթեցնում են ուրիշ տասնյակ երեխաների և կոլեկտիվ լացը բռնել է դաշտը: Հոմերական ժպիտն աչքերում, արևառ դեմքը քրտնքի մեջ կորած, ընկեր Արմենուհին օրորում է երեխաներին, քը՛շ, տո՛ քըշ—ու ծիծաղում: Ուրիշ ի՞նչ անի:

— Դե 55 երեխա է, իհարկե պիտի լաց ըլեն: Ո՞նց անեմ, մայրը չի գալիս, որ ծիծ տա:

Ոչ, նա չի գա դեռ, նա այս րոպեիս բամբակի դաշտում պայքար է մղում, հարվածում, մրցում: Հարվածային օրեր են, մարտ է գնում այնտեղ: Ոչինչ, թող երեխան լաց լինի: Մի ամիս էլ՝ և հաղթությունը կբերի ուրախություն և հանգիստ:

Երեխաների վժժոցը մի տեղ լռում է, մյուս տեղից ծայր առնում:

— Ի՜նչ լավիկն է. ճանաչո՞ւմ եք ում երեխան է:

— Աշի, ես շա՞տ եմ իմանում, էնքա՜ն են,— ծիծաղում է և գուրգուրում լավիկին:

Դաշտը, սակայն, կլանում է երեխաների լացն էպիքական խաղաղությամբ: Նա ավելի մեծ գործի վրա է—հասցնում է բերքը: Խոսքը նրանն է:

Հեռանում ենք մանկամսուրից և կրկին մտնում բամբակի արտերն ու այգիները, որ հաջորդում են իրար: Նրանց արանքներում՝ իբրև լիրիկական շեղումներ՝ սպրդել են գարու, ցորենի արտերը:

Ահա և կանանց բրիգադները: Նրանք մեզ տեսնելիս ուրախ-ուրախ բարևում են—աշխատանքը ոգևորել է՝ երևում է:

Երկ-երկու, երեք-երեք կամ ավելի՝ հոգիանոց շարքերով նրանք կռացած առաջ են շարժվում իրենց փոքրիկ «առաջադրանքների» գծով և ուրագներով քաղհան են անում:

Աշխատում են ռիթմիկ, արագ, որոշ կարգապահությամբ: Արտերը լցված են բուսական լոդրերով, կուլակներով ու այլ պարազիտներով— ահա այդ ցեցերին են զտում բուսական կոլեկտիվից: Զտում, մաքրում, մշակում— ահա սոցիալիզմի առաջին էտապների գործը հասարակական և բուսական կոլեկտիվներում: Անողոք պայքար է և կատաղի դիմադրություն երկուստեք, երկու տեղում: Եվ կինը դուրս է եկել ռազմադաշտ: Նա էլ է կռվում: Կռվում է և կոփվում:

Դրանցից է ընկեր Արուս Սաֆարյանը: Ահա գալիս է նա դեպի ծառի ստվերը: Կանանց բրիգադը նրան է ուղարկում գրողի մոտ: Երիտասարդ, առողջակազմ նախկին բատրակուհին մոտենում է ինձ հանգիստ ժպիտով: Արևը խաշել է նրան, դարձրել ցորենի հասկ:

Դաշտի, աշխատանքի, հույսի և ուրախության շունչ է փչում նրանից:

Նրա վերելքը մի հեքիաթական թռիչք է: Ամուսինը, նախկին հովիվ, խիստ մարդ, իսկի միտք չուներ կոլեկտիվ մտնելու: Մի «յորղան» էլ չուներ—բայց դեմ էր:

— Արի՛ խետ ինձ կոլխոզ, կոլխոզ թողած ո՞ւր ենք ընկնում սրա-նրա դուռը: Դեմ էր: Որ էդպես է՝ վիզս էլ կտրես՝ պիտի մտնեմ կոլխոզ: Կբաժանվեմ: Եկա՛վ… Առաջի տարին վատ էր… ըստ շնչի էր… Աշխատողն էր տուժելի:

Հիմի՞: Հիմի քանակ ու որակ կա, հիմի «ով աշխատի՝ նա կուտի»: Աշխատողը չի տուժի:

— Հա՛, դժար էր առաջին տարին… Հիմի՞: Երկու ձեռք յորղան-դոշակ, թախտեր, խալի, հացի սեղան, գրամաֆո՛ն…

Ծիծաղում է:

— Ամեն բան ունենք, ոչ մի բանից պակասություն չենքքաշում: Չորս փութ հաց ստացա, մի փութը փոխ տվի հարևանիս: Հացից բավարար ենք 100 տոկոս, մինչև հունձն ընկնի:

— Հիմի ամուսինդ գո՞հ է:

— Հարյո՛ւր տոկոս: Հարվածային է — ծիծաղում է— ես 28-ից, նա 30-ից: Ոչ մի ժողովից չեմ բացակայում: Մարդս էլ: (Դարձյալ ծիծաղում է): Հաշտ ենք մարդուս հետ, հարյուր տոկոսով ապահովված է կոլխոզին:

— Կին բրիգադի՞ր:

— Ես փոխբրիգադիր եմ: Դե էնքան կրթված չունենք, որ աշխօր դուրս բերի: Բայց կազմակերպիչներ ունենք:

— Կանայք ինչպե՞ս ակտիվացան:

— Ո՜նց… Երկու տարի առաջ զոռով էին դուրս գալի դաշտ: Անպատիվ խոսքեր էին ասում: Վերջն ինձ տեսան, ապրուստս, ճաշը, մսուրը՝ եկա՜ն: Հիմի գիտակից են, հիմի մսուրն իրենց սեփական տունն են հաշվում: Ասում են՝ քոռանամ, հնչի՞ լսեցինք կուլակներին՝ հետ մնացինք կոլխոզիցն ու աշխատանքից:

— Կուլակներ կա՞ն:

— Քշե՛լ ենք, 28 թվից աչքները հանել: Բայց էլի կա՜ն… մենակ չենք թողնում, որ զորանան:

— Ընկեր Արուս, կուսակցակա՞ն եք:

— Ոչ:

— Ամուսինդ էլ՝

— Նա էլ՝ ոչ:

— …

— Լիկկայան գնացե՞լ եք:

— Ամե՜ն օր գնում եմ (շեշտում է «ամեն» բառը): Մարդս անգրագետ է... (ծիծաղում է): Այդ ծիծաղը նրա հաղթանակի ծիծաղն է:

***

Ահա և Եղիսաբեթ Շահոյանը: Ամուսինը գրագետ, ինքն անգրագետ : Ամուսինը կուսակցական՝ ինքը ոչ: Ամուսինը պնդել էրմտնել կոլեկտիվ, ինքը հակառակ է եղել: Հիմի հարվածայիններ են ամուսինն էլ, ինքն էլ:

— Մարդս կասեր՝ կոլխոզ լավ է, ուրիշին ականջ մի՛ դիր: Ես էլ վերջն ասի՝ «դու որ մտնես՝ ես էլ խետ քե»:

Առաջին տարին վատ էր: Կոլխոզ շատ էր, եկամուտը քիչ, ըստ շնչի էր: Կոլխոզ փըռնվավ: Մկա կոլխոզ լավ է՝ թե աշխատես: Ու մկա լյավ է, քանց էն անհատ ժամանակ:

— Մենատնտեսի՞ աշխատանքն է ծանր, թե՞ կոլխոզինը:

— Կոլխոզինը ծանր է: Դե, մենատնտեսը կարա լոդրություն անի, քիչ բերք ստանա: Բայց կոլխոզը շատ է ստանում, շատ էլ աշխատում է: **Կոլխոզը մեծ գործ է:** Կոլխոզում կարգ կա, մաքուր գործ ես բռնելի: Կոլխոզն ամենքի համար է կանգնած, ամենքին քոմակ է անում:

— Հարվածային ես, ընկեր Շահոյան, բայց ի՞նչ բան է հարվածայնությունը:

— Հարվածայնությունն ուրիշին սովորեցնելու մեջ է: Մենակ իմ աշխատելը չի բանը: Ես կասեմ՝ խարևանս էլ գա ինձի խասնի: Բոլորս պիտի դառնանք հարվածային—էդ է հարվածայնությունը:

— Ամուսինդ ինչպե՞ս է, իբրև հարվածային:

— Նիկոն կիմանա (նախագահը), մեկ գանգատավոր չկա, 4 տարի է բրիգադիր է: Վատ որ ըլեր՝ կփոխեին: Կուսակցական է: Գրագետ:

— Իսկ դո՞ւք:

— Ես… (աչքերը կախում է): Չորս երեխի տեր եմ: Հերու գնացի լիկկայան, երեխեն ընկավ թոնիրը: Է՛, երեխաներն էլ են գնում ուսումնարան, ես էլ, տեսնենք…

— Ապրուստնե՞րդ:

— Անցյալ տարի 325 աշխօր ստացանք ես ու մարդս: Ես 80 աշխօր:

Հեչ պակասություն չունենք: Տան մեջ, շոր, փալաս, յորղան-դոշակ, ամեն բան: Ինչրու խացերը հասնի՝ շատ լավ կլի:

— Բա էսպես գնալով ո՞ւր ենք հասնելու ընկեր Շահոյան:

— Շատ լավ տեղ կհասնի, փիս տեղ չի խասնի: Մեր տղեքը շատ լավ բաներ կտեսնեն: Լյավ տեղ ենք երթալի—սոցիալիզմ:

***

Արդյոք երազ չէ՞ կամ հեքիաթ: Սա, իմ կողքին նստած հայ գեղջկուհին, որ առաջ տղամարդ տեսնելիս քիթ ու բերանը ծածկում էր կեղտոտ փալասով ու փախչում: Ո՞ւր է թռել սա, և ո՞վ է թռցրել սրան մինչև այս բարձունքները:

Ահա այստեղ, կոլեկտիվի դաշտերում աշխատանքի, սոցիալիստական շինարարության գրոհի մեջ ծնվում են ու աճում հերոսուհիները: Նրանցից ամեն մեկն իրականացնում է իր առաջադրանքի մասը, ապա օղակ-օղակ, բրիգադ-բրիգադ, կոլեկտիվ, շրջան. երկիր—լցվում, տիրականորեն գնում է դեպի մի մեծ, ընդհանուր առաջադրանքը—**սոցիալիզմ**:

Չէ. հին գյուղը չկա, նա փոխվել է հիմնովին: Հին գյուղը թռիչք է կատարել:

Հսկաների թռիչք:

ՀՍԿԱՆԵՐԻ ԹՌԻՉՔԸ

(Էջ 141)

Առաջին անգամ տպագրվել է «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933, N 131: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից: